Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձաժողովի նախագահ Սիրանուշ Սահակյանի հարցազրույցը՝ Հայաստանի Հանրային Ռադիոյի՝ «Ձեր փաստաբան՝ Արամ Վարդևանյան» իրավական հարցերի վերաբերյալ հաղորդմանը

**Լրագրող** – Որո՞նք են Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի հիմնական գործառույթները:

**Սիրանուշ Սահակյան** – Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովն իրականացնում է երեք հիմնական գործառույթ: Առաջինը կապված է հայտարարագրման համակարգի հետ, որի շրջանակներում Հանձնաժողովը վարում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի ռեեստրը, ընդունում հայտարարագրեր, որոնցում ներկայացվում է պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն: Հանձնաժողովը նաև ապահովում է այդ տեղեկատվության վերլուծությունը և հրապարակայնացումը: Հանձնաժողովի երկրորդ գործառույթը էթիկայի կանոնների խախտման բացահայտումն է, ընդ որում՝ ոչ բոլոր բարձրաստիճան պաշտոնատար անձանց, այլ հիմնականում իշխանության գործադիր թևի պաշտոնյաների մասով, իսկ դատավորների և դատախազների մասով՝ եթե խախտումներն առնչվում են ոչ մասնագիտական էթիկային: Ինչ վերաբերում է նշված սուբյեկտների մասնագիտական էթիկայի կանոններին, ապա դրանց պահպանմանը հետևում են այդ նպատակով ձևավորված համապատասխան հանձնաժողովները: Հանձնաժողովի երրորդ գործառույթը շահերի բախման բացահայտումն: Սույն գործառույթի իրականացումն առավելապես առնչվում է իշխանության գործադիր թևի պաշտոնյաներին և վերաբերելի չէ պատգամավորներին, դատավորներին և դատախազներին:

**Լրագրող** – Անդրադառնալով այն հանգամանքին, որ Հանձնաժողովն իրավասու չէ պարզել պատգամավորների, դատավորների և դատախազների կողմից էթիկայի կանոնների խախտման դեպքերը և այդ կապակցությամբ գործում են համապատասխան կառույցներ՝ արդյո՞ք արդյունավետության առումով դա վնաս չի հասցնում ընդհանուր նպատակին՝ էթիկայի մասով հսկողություն իրականացնելու տեսանկյունից:

**Սիրանուշ Սահակյան** – Որոշակի խնդիրներ կարող են առաջ գալ, քանի որ ֆրագմենտացիայի ռիսկ գոյություն ունի, բայց ամեն դեպքում միջազգային փորձը

զարգանում է այն ճանապարհով, որ ծառայությունների առանձնահատկություններով պայմանավորված անհրաժեշտ է ունենալ կոնկրետ կառույցներ: Մասնավորապես, շատ լուրջ սպառնալիք կլինի դատական իշխանությանը, եթե էթիկայի հանձնաժողովը, լինելով դատական համակարգից դուրս, պատասխանի մասնագիտական էթիկային առնչվող հարցադրումների: Միևնույն ժամանակ, Ազգային ժողովի պատգամավորների ընտրովիությամբ և գործունեության բնույթով պայմանավորված, ցանկալի է, որ նրանց կողմից էթիկայի կանոնների պահպանման հարցերը քննարկվեն օրենսդիր մարմնի համապատասխան հանձնաժողովի կողմից: Իշխանության գործադիր թևի հետ կապված, նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործադիր իշխանության հանրապետական մարմիններում ևս ձևավորվում են էթիկայի հանձնաժողովներ՝ այստեղ անհրաժեշտ է համակարգի ամբողջականությունը և միասնականությունն ապահովող համակարգ և այդ առումով պետք է ձևավորվի համակարգող և վերահսկող մարմին: Իր դերով և ներուժով այդպիսի մարմին կարող է դառնալ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը: Այդ կապակցությամբ, ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագրով Հանձնաժողովի իրավասության ոլորտների հետ կապված, ՀՀ կառավարությանը ֆինանսական աջակցության տրամադրման նախապայմաններից մեկի կատարումը ենթադրում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի՝ որպես համակարգող մարմնի դերակատարության ստանձնում կամ այլ մարմնի ձևավորում:

**Լրագրող** - Ռեսուրսներ խնայելու տեսանկյունից ավելի արդյունավետ կլինի այդ նոր իրավասությունը վերապահել արդեն գործող կառույցին՝ Էթիկայի հանձնաժողովին:

**Սիրանուշ Սահակյան** – Իրենց դերի առանձնահատկություններով պայմանավորված՝ միջազգային կառույցները չեն ցանկանում պետական մարմիններին կոնկրետ լուծումներ առաջարկել, բայց որպես պոտենցիալ մարմին դիտարկում են Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին: Նմանատիպ մոդել գոյություն ունի բազմաթիվ երկրներում. օրինակ՝ Լիտվա կատարած այցելության շրջանակներում մենք տեսանք, որ գլխադասային այդ մարմինը տիպային կանոններ է մշակում, որոնք տեղայնացվում են ոլորտային մարմինների կողմից, այս գործընթացում վերահսկողություն է իրականացնում և նույնիսկ ոլորտային մարմինների որոշումները վերադասության կարգով կարող են բողոքարկվել գլխադասային էթիկայի հանձնաժողովին, որն ապահովում է կանոնների կիրառության միասնականությունը:

**Լրագրող** - Արդյո՞ք հարկավոր չէ Հայաստանում էթիկայի միասնական կանոնների մշակումը:

**Սիրանուշ Սահակյան** – Սա որոշակի նրբերանգ ունեցող հարցադրում է. բոլոր բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար միասնական կանոնների ապահովման անհրաժեշտության հարցն, ըստ իս, խնդրահարույց է: Հանձնաժողովն առիթ է ունեցել օտարերկրյա մասնագետների հետ քննարկել այս հարցը՝ գալով այն համոզմանը, որ միասնական վարքագծային կանոններ բոլոր բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար սահմանելը ճիշտ չէ՝ պայմանավորված առանձին կատեգորիաների պաշտոնատար անձանց կարգավիճակային առանձնահատկություններով: Մենք չենք կարող ընտրովի պաշտոնատար անձին և մասնագիտական գործունեություն իրականացնող պաշտոնատար անձին նույն վարքագծային կանոններով կաշկանդել: Բնականաբար, չենք կարող ակնկալել նախարարից, որը քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ է, նույն աստիճանի քաղաքական չեզոքություն, ինչն ակնկալվում է, օրինակ, ազգային անվտանգության ծառայության կամ ուժային այլ կառույցների ղեկավարներից: Հետևաբար՝ հանրային ծառայության արժեքները և սկզբունքները կարող են լինել միասնական: Մենք կարող ենք առավելագույնս ունենալ միասնական կանոններ, որոնք ավելի ցածր մակարդակի դրույթներ են, քան արժեքները, սակայն ինչ վերաբերում է վարքագծային կանոնագրքերին, դրանք պետք է տեղայնացվեն: Ցանկալի է, որ մշակվեն վարքագծային կանոններ՝ առանձին խմբերի համար: Մենք փորձում ենք զարգանալ այդ ճանապարհով: Օրենքը չի հստակեցրել արժեքի, սկզբունքի, կանոնի և վարքագծային կանոնի հարաբերությունները և ցանկալի է, որ այդ բարձր մակարդակի դրույթներն ամրագրվեն որպես միասնական արժեքներ, սկզբունքներ օրենքում, իսկ վարքագծային կանոնագրքերը մշակվեն առանձին խմբերի համար: Մենք ներկայումս մշակում ենք Գործադիր իշխանության բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի կանոնագիրքը:

**Լրագրող** - Ի՞նչ է ենթադրում «շահերի բախում» հասկացությունը:

**Սիրանուշ Սահակյան** – Շահերի բախման վերաբերյալ մի քանի դրույթ է սահմանված «Հանրային ծառայության մասին» օրենքում, որտեղ շահերի բախումը բնորոշվում է որպես պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակներում որոշում կայացնելիս կամ գործողություն կատարելիս անձնական

շահերով առաջնորդվել: Շահերի բախման վերաբերյալ հետագա մանրամասնեցում կա նաև վերոնշյալ օրենքի 30-րդ հոդվածում, որն ավելի է կոնկրետացնում և մի քանի համաժամանակյա պայմաններ է առաջադրում. մասնավորապես՝ պաշտոնատար անձը պետք է գործի իր լիազորությունների շրջանակներում, պետք է որոշում կայացնի կամ գործողություն կատարի, իր կայացրած որոշման կամ գորոծողության արդյունքում պետք է իր կամ իր փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրությունը բարելավի: Այստեղ կարևորվում է որոշում կայացնելու գործընթացում անձնական մասնակցությունը՝ անկախ այն հանգամանքից դա կլինի միանձնյա որոշում, թե կոլեգիալ մարմնում որոշում՝ մասնակի դրսևորումներով:

ՀՀ օրենսդրությամբ շահերի բախման բնորոշումը համահունչ չէ միջազգային չափորոշիչներին:

**Լրագրող** – Այսինքն օրենքի այս դրույթը վերաբերում է միայն բարձրաստիճան պաշտոնատար անձանց: Իսկ եթե անձը, որը «բարձրաստիճան» չէ, այլ՝ պետական ծառայող է, սակայն ունի որոշում կայացնելու որոշակի լիազորություններ:

**Սիրանուշ Սահակյան** – Սույն դրույթը հանրային ծառայողների վրա չի տարածվում: Այն վերաբերելի է բարձրաստիճան պաշտոնատար անձանց, բացառությամբ դատավորների, դատախազների, պատգամավորների, քանզի վերջիններիս շահերի բախման վերաբերյալ դրույթներն սահմանված են որորտային օրենսդրությամբ:

**Լրագրող** – Չե՞ք կարծում, որ այստեղ օրենսդրական կարգավորումների խնդիր կա: Այս տեսանկյունից հետաքրքիր է, թե ինչպիսի խոչընդոտներ կան Հանձնաժողովի առջև, որոնք խանգարում են Հանձնաժողովին արդյունավետորեն իրականացնել իր առաքելությունը, գործունեությունը:

**Սիրանուշ Սահակյան** – Իհարկե, խոչընդոտներ կան: Դրանք և՛ օրենսդրական, և՛ կազմակերպաիրավական բնույթի են: Որպես դրական միտում կարող եմ արձանագրել, որ ոլորտում հետաքրքրություն ունեցող անձինք, կառույցներն ավելի պրոֆեսիոնալ կերպով են սկսել հասկանալ խնդիրները: Եթե նախկինում պարզապես աղաղակում էին, որ այստեղ պատվերի կամ քաղաքական կամքի բացակայության խնդիր կա, ապա ներկայումս կարողացել են առավել խորքային ծանոթանալ խնդիրներին, ուսումնասիրել և ճիշտ ախտորոշել դրանք: Ներկայումս տարանջատվել են խնդիրները, և բազմաթիվ ոլորտային հեղինակային կառույցներ, այդ թվում՝ «Թրանսփարենսի ինթերնեյշնլ», ահազանգում են, որ մեծամասամբ խնդիրներն օրենսդրական են և մենք չենք կարող Հանձնաժողովի գործունեության

բարձր արդյունավետություն ակնկալել, քանի դեռ դրանք համակցված չեն օրենսդրական փոփոխություններով: Հետևաբար, վստահորեն արձանագրենք, որ խոչնդոտող հանգամանքներից են ոչ բարենպաստ օրենսդրական կարգավորումները:

**Լրագրող** – Իսկ այդ ուղղությամբ որոշակի փոփոխություններ նախատեսվու՞մ են:

**Սիրանուշ Սահակյան** – Հանձնաժողովը վերլուծել է առկա խնդիրները և մշակել դրանց մի մասի լուծման փաթեթ: Հանձնաժողովն օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավասություն չունի և առկա խնդիրների օրենսդրական լուծումը հնարավոր է համարում կառավարության՝ որպես օրենսդրական նախաձեռնության սուբյեկտի, միջոցով: Հանձնաժողովը պաշտոնապես դիմել է Կառավարությանը՝ խնդրելով աջակցություն ցուցաբերել սույն հարցում: Մասնավորապես, Հանձնաժողովի նախաձեռնությամբ ձևավորվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որտեղ քննարկվում են այս և մի շարք այլ խնդիրներ: Արդյունքում, մշակվելիք փաստաթղթի հիման վրա Կառավարությունը կարող է առկա մի շարք խնդիրների լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկել:

Երկրորդ խնդիրը պայմանավորված է ռեսուրսով: Ինչպես հայտնի է, Հանձնաժողովն ունի 5 անդամ և չունի աշխատակազմ: Մինչդեռ ՀՀ-ում գործող համանման կառույցների աշխատակազմերի աշխատակիցների թվաքանակը բավական մեծ է: Այսինքն՝ օրենքով Հանձնաժողովին վերապահված բոլոր գործառույթները ներկայումս իրականացնում են Հանձնաժողովի հինգ անդամները: Ռեսուրսային սահմանափակվածությունը լուրջ խնդիրների առաջ է կանգնեցնում Հանձնաժողովին: Առկա է նաև խնդիր՝ կապված Հանձնաժողովի ֆինանսական անկախության ապահովման հետ: Նշված խնդիրները բարձրաձայնվել են ինչպես Հանձնաժողովի, այնպես էլ միջազգային կառույցների կողմից և դրանց մի մասի լուծմանն ուղղված առաջարկությունները ներկայացվել են Կառավարություն: